

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի «Ջրածորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկուլտուրայի (8 դասաժամ), Ֆիզիկայի (7 դասաժամ), աշխարհագրության (5 դասաժամ), ինֆորմատիկայի (3 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 1)
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձև 4)
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում)
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են հրապարակման օրվանից մինչև 2018թ հոկտեմբերի 30-ը ներառյալ՝ ժամը 10<sup>00</sup> - 15<sup>00</sup>, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Փաստաթղթերի ընդունումն ու հայեցակարգը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթն անցկացվելու է Շիրակի մարզի Ջրածորի միջնակարգ դպրոցում 2018 թվականի նոյեմբերի 2 -ին՝ ժամը 14:00 -ին:

Հասցեն՝ Շիրակի մարզ գյուղ Ջրածոր 4-րդ փողոց 52 շենք:

Մրցույթում հաղթողի հետ կկնքվի հիմնական աշխատանքային պայմանագիր:

Տեղեկությունների համար զանգահարել 093-61-98-51 հեռախոսահամարով: